Միթէ՞ այդպէս կարելի է վերաբերոել դէպի մի սրբութիւն, մտածում էի ես: Նա դատում էր գրքի մասին միայն արհեստի կէտից:

Երբ դուրս եկանք ժամատան բակը, վանահայրը հրաւիրեց մեզ իր խուցը: Ասլանը գնաց, բայց ես չգնացի:

Այդ միջոցին պատահեց Բերզէն-օղլին, որ ինձ տարաւ եւ բաւական ման ածեց կղզու մէջ:

Ճաշից յետոյ փոթորիկը համարեա թէ դադարել էր. կատաղի ծովը աւելի հանդարտ էր, կուտակուած ամպերը ցրիւ էին եկած, եւ արեգակը դարձեալ լուսաւորում էր իր պայծառ ճառագայթներով: Ես եւ նաւաստին երկար շրջում էինք ապառաժոտ կղղու վրայ, եւ նա ինձ ցոյց էր տալիս այս եւ այն տեղերը, որոնց հետ կապուած էին ամբողջ աւանդութիւններ: Կղզին բոլորովին մերկ էր եւ ցամաք. բացի դեղին եւ նարնջագոյն անթառամ ծաղիկներից եւ անտերեւ աւելուկներից, մի այլ դալար բոյս չէինք տեսնում: Նրա բնակիչները հոգ չէին տարել մի քանի ծառեր անգամ տնկել այստեղ: Այդ կղզին կատարեալ դրախտ կարելի էր դարձնել, որովհետեւ ջրի աղբիւրներ կային: Գոնէ իրանց համար հոգ տանէին ճգնաւորները, չէ՞ որ նրանցից շատերը կերակրւում էին միայն բոյսերով, իսկ այդ անապատը բոլորովին զուրկ էր բուսականութիւնից:

Ոչ ոք չէր երեւում: Կարծես թռչուններն անգամ փախել էին այստեղից: Միայն հեռոից նշմարեցինք մի կիսամերկ անձնաւորութիւն, խառնուած մօրուքով եւ գլխի մազերով: Նա երկչոտ կերպով նայեց մեզ վրայ, յետոյ, երկու ձեռքով աչքերը պինդ բռնելով, սկսեց փախչել եւ շուտով անյայտացաւ ժայռերի մէջ:

— Ո՞վ էր նա, — հարցրի նաւաստիից:

— Ճգնաւոր էր, — պատասխանեց նա մի առանձին ջերմեռանդութեամբ:

Մենք այլեւս հեռու չգնացինք, չկամենալով խանգարել նրանց հանգստութիւնը :

— Ինչո՞ւ փախաւ նա, երբ որ մեզ տեսաւ, — դարձեալ հարցրի ես նաւաստիից:

— Մեղաւոր մարդու երեսը նրանք չեն ուզում տեսնել, — պատասխանեց նաւաստին:

Ես, ուղիղն ասած, եթէ ոչ երկիւղ, բայց մի անբացատրելի թախիծ ու տրտմութիւն էի զգում այդ մարդկանց հանդիպելիս, այդ էր պատճառը, որ